ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ի պատասխան Ձեր 28.11.2023թ. N10/11 գրության, ներկայացվում է տեղեկատվություն՝ 2019-2022 թվականների ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(2019-2022 թվականների ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ)

1. Տեղական տուրքերի հավաքագրում և հսկողություն

2019 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղական տուրքերի գանձումները ստուգելու նպատակով 25000 օբյեկտներում իրականացվել է հսկողություն, ինչի արդյունքում առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական տուրքերի հավաքագրումը 2019 թվականի ընթացքում կազմել 1,492,051.400 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա հավաքագրված գումարի համեմատ ավել է 370,682.900 դրամով կամ 33%-ով:

2020 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղական տուրքերի գանձումները ստուգելու նպատակով 15000 օբյեկտներում իրականացվել է հսկողություն, ինչի արդյունքում առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական տուրքերի հավաքագրումը 2020 թվականի ընթացքում կազմել է 1,284,153.500 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա հավաքագրված գումարի համեմատ պակաս է 207,897.900 դրամով կամ 13.9%-ով, ինչը պայմանավորված է 2020 թվականի ընթացքում տնտեսական գործունեության նկատմամբ կիրառված ժամանակավոր սահմանափակումների հետ:

2021 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղական տուրքերի գանձումները ստուգելու նպատակով 22000 օբյեկտներում իրականացվել է հսկողություն, ինչի արդյունքում առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական տուրքերի հավաքագրումը 2021 թվականին կազմել 1,371,309.600 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա հավաքագրված գումարի համեմատ ավել է 319,577.600 դրամով կամ 23.3%-ով:

2022 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղական տուրքերի գանձումները ստուգելու նպատակով 26000 օբյեկտներում իրականացվել է հսկողություն, ինչի արդյունքում առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական տուրքերի հավաքագրումը 2022 թվականին կազմել է 1,525,818.700 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա հավաքագրված գումարի համեմատ ավել է 157,959.100 դրամով կամ 11.5%-ով:

2. Հանրային սննդի սեզոնային ծառայություն

2019 թվականի ընթացքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ կնքվել է 265 քաղաքացիաիրավական պայմանագիր և գանձվել 49,654.715 դրամ գումար, որը նախորդ տարվա հավաքագրած գումարի համեմատ ավել է 9,051.151 դրամով կամ 22.29%-ով:

2020 թվականի ընթացքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ կնքվել է 309 քաղաքացիաիրավական պայմանագիր և գանձվել 77,792.500 դրամ գումար, որը նախորդ տարվա հավաքագրած գումարի համեմատ ավել է 28,137.785 դրամով կամ 56.66%-ով:

2021 թվականի ընթացքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ կնքվել է 358 քաղաքացիաիրավական պայմանագիր և գանձվել 91,919.700 դրամ գումար, որը նախորդ տարվա հավաքագրած գումարի համեմատ ավել է 14,127.200 դրամով կամ 15.3%-ով:

2022 թվականի ընթացքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ կնքվել է 353 քաղաքացիաիրավական պայմանագիր և գանձվել 105,127.723 դրամ գումար, որը նախորդ տարվա հավաքագրած գումարի համեմատ ավել է 13,208.023 դրամով կամ 14.3%-ով:

3. Վարչական իրավախախտումներ

2019-2022 թվականների ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել և կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ **7730 արձանագրություն, որից 4469-ը կամ 57.9%-ը առևտրի և ծառայությունների վարչության կողմից, 225-ը կամ 2.9%-ը հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից, իսկ 3036-ը կամ 39.2%-ը՝ Երևանի 12 վարչական շրջանների:**

2023 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների վարչության կողմից կազմվել է 1476, իսկ հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից՝ 54 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն

4. Բացօթյա ապօրինի առևտրի դեմ պայքար

Բացօթյա ապօրինի առևտրի արգելման և կանոնակարգման ուղղությամբ ձեռնարկվել են լայնածավալ միջոցառումներ, մայրաքաղաքի կենտրոնական հրապարակներում և փողոցներում ժամը 18.00-ից հետո կատարվել են շրջայցեր,

իրականացվել հերթապահություններ, ինչի արդյունքում որպես տիրազուրկ գույք վերցվել են իրավախախտման համար անմիջական գործիք հանդիսացող ապրանքները, գազաբալոնները և տարատեսակ սարքավորումներ ու ապրանքներ, իսկ **միայն 2023 թվականի ընթացքում վարչության կողմից առգրավվել է 18.000կգ գյուղատնտեսական արտադրանք, վարչական շրջանների կողմից՝ 1796, իսկ հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից՝ 0 կգ**:

5. Նորմատիվ-իրավական ակտերի մշակում

Առևտրի և ծառայությունների վարչության կողմից մշակվել և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացրել 13 նորմատիվ իրավական ակտի նախագիծ, որոնք ավագանու կողմից ընդունվել են:

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Երևան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին» N 175-Ն որոշում:
2. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 188-Ն որոշում:
3. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» N 242-Ն որոշում:
4. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը սահմանելու մասին» N 243-Ն որոշում:
5. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի

իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանելու մասին» N 267-Ն որոշում:

6. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի «Երևան համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը սահմանելու մասին» թիվ 402-Ն որոշում:
7. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 471-Ն որոշում:
8. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 267-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 472-Ն որոշում:
9. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշում:
10. **Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 719-Ն որոշում:**
11. **Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «**Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները **սահմանելու մասին» N 718-Ն որոշում:**
12. **Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի «**Երևան համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցների կայանման վայրերի ցանկը հաստատելու մասին**» N 816-Ն որոշում:**
13. **Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի** «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին մասին» N 854-Ն որոշում:

2021 թվականին առևտրի և ծառայությունների վարչության առաջարկությամբ աշխատակազմի եկամուտների վարչության կողմից մշակվել և ավագանու քննարկմանն է ներկայացվել տեղական տուրքերի և վճարների գանձումն ապահովելու և թույլտվություններ տրամադրելու Երևանի քաղաքապետի լիազորությունները վարչական շրջանների ղեկավարներին վերապահելու մասին որոշման նախագիծը, որը ավագանու կողմից ընդունվել է՝ Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 390-Ն որոշում:

2021 թվականին առևտրի և ծառայությունների վարչության և վարչական շրջանների համապատասխան ստորաբաժնումների անվանումները չեն համապատասխանել օրենքներով և նորմատիվ-իրավական այլ ակտերով վերջիններիս վերապահված գործառույթներին, ուստի վարչության կողմից առաջարկվել է փոփոխություններ իրականացնել Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման մեջ և «Առևտրի և սպասարկումների» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների» բառերով, որը և ընդունվել է՝ Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մարտի 16-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 347-Ա որոշում:

Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման և բարեփոխումների նպատակով մշակվել և օրենսդիր մարմին են ներկայացվել մի շարք օրենսդրական նախագծեր, որոնց մեծ մասն արդեն իսկ ընդունվել է և կիրառվում են, մասնավորապես՝

1. «Առևտրի և ծառայությունների մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներում կատարված լրացումների արդյունքում Երևան քաղաքում կանոնակարգվել է շրջիկ և շրջածախ առևտուրը:
2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում կատարված փոփոխության արդյունքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական և հեղուկացված նավթային գազերի տուրքերն առանձնացվել է և տնտեսվարողների կողմից յուրաքանչյուրի համար վճարվում է առանձին տուրք, ինչի արդյունքում Երևանի բյուջեում սույն մասով եկամուտների մուտքերն ավելացել են:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում 162-րդ հոդվածն ամբողջովին լրամշակվել և խմբագրվել է, ինչի արդյունքում անկախ իրավախախտում կատարած անձի կարգավիճակից՝ ֆիզիկական անձ, թե իրավաբանական, և վաճառվող

ապրանքի տեսակից նախատեսվել է տուգանքի նշանակում, որի չափը զգալիորեն բարձրացվել է:

158-րդ հոդվածում ավելացել է 2 նոր հոդվածներ, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի պահանջների համաձայն՝ օբյեկտում հսկողության ընթացքում ՏԻՄ աշխատակիցների աշխատանքը խոչընդոտելու և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով ամրագրված՝ վաճառված պատշաճ որակի ոչ պարենային ապրանքները օրենքով սահմանված ժամկետում և օրենքով սահմանված դեպքերում չփոխարինելու կամ հետ չվերցնելու կամ հետ վերցնելուց կամ փոխարինելուց հրաժարվելու մասին հայտարարություն փակցնելու համար նախատեսվել է տուգանքի նշանակում:

Լրամշակվել և նոր խմբագրությամբ է շարադրվել նաև 169.16-րդ հոդվածը, ինչի արդյունքում առևտրի և ծառայությունների ոլորտի մասով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված բոլոր թույլտվությունների տեսակների համար սահմանվել է տուգանքի չափ, ավելացվել է կրկնակիություն, տուգանքների չափը բարձրացվել է:

4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներում կատարված լրացումների արդյունքում սահմանվել է տեղական տուրքի նոր տեսակ՝ հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելը, 2 սեզոնով՝ ամառային և ձմեռային, ինչպես նաև ավագանուն տրվել է լիազորություն սահմանելու հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:
5. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարված լրացման արդյունքում Երևան քաղաքի ավագանուն տրվել է լիազորություն սահմանելու «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը:

Առևտրի և ծառայությունների վարչության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ավտոմատ սարքավորումների միջոցով առևտուր իրականացնելու և ծառայություններ մատուցելու գործունեության կարգավորման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթ, որի ընդունումից կկարգավորվի նաև առևտրի նշված ոլորտը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ